

ոգեւորութեամբ կը բանայ սնտուկը, սակայն հոն կը գտնէ միայն ոսկի եւ թանկարժէք քարեր, եւ հիասթափուած եւ յուսահատ կ'իյնայ գետին:

Վայրկեանի մը համար թող մենք մեզի դնենք այդ դժբախտ նաւաստիին տեղը եւ հարց տանք մենք մեզի թէ ի՞նչ պիտի զգայինք եթէ օր մը իյնայինք յաւիտենականին ծովափը բոլորովին անոք եւ անպատրաստ, արդեօք մեր չափեցող անօթութիւնը պիտի գոհանա՞յ երկրաւոր կեանքի ընթացքին մեր հաւաքած գանձերով եւ կալուածներու հարստութեամբ, եւ ի վիճակի պիտի ըլլա՞նք առակի հերոսին նման ըսելու. «Անձ իմ, կեր, ա՛րբ եւ ուրախ լեր»։ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, յաւիտենից, ամէն:

Ն.Ա.Մ.

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Փորձառութիւնը մայրն է իմաստութեան:

Եթէ վստահ չես թէ ո՞ւր կ'երթաս, հաւանաբար վերջաւորութեան ուրիշ տեղ կ'երթաս:

Առաքինութիւնը միա՛կ եւ իրա՛ւ ազնուութիւնն է:

Վատ բանուորը իր սխալը կը վերագրէ գործիքներուն:

Երբեք ուշ չէ բեկանուած բարեկամութիւններ նորոգելը:

Կարելի չէ միտքով արտ հերկել:

Ամէն ինչ կու գայ ձեզի եթէ համբերող էք:

Կռիւներ կը վերջանան, սակայն ըսուած խօսքերը երբեք չեն մեռնիր:

Ձեռքերու առատութիւնը գործը կը թեթեւցնէ:

Հագուստը մէկ թելով չէ հիւսուած:

Տարիները աւելի բան գիտեն քան գիրքերը:

Դրացիդ սիրէ՛, բայց պատնէշդ վար մի՛ առնէր:

Անգէտը ոչ մէկ բանէ կը կասկածի:

Քիչ ըսէ՛, բայց լաւ ըսէ՛: